Հավելված N 1
ՀՀ կառավարության 2014 թվականի
սեպտեմբերի 11-ի N 1058 - Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆԻ ՍՏԵՂԾՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են մշակութային արժեքների էլեկտրոնային տեղեկատվական շտեմարանի (այսուհետ՝ շտեմարան) ստեղծման հետ կապված հարաբերությունները:

2. Շտեմարանն էլեկտրոնային (թվային) համակարգ է, որն ընդգրկելու է մշակութային շարժական արժեքների վերաբերյալ թվայնացված, հանրության համար հասանելի տեղեկույթը (անկախ դրանց սեփականության ձևից և ստեղծման ժամանակից): Մշակութային շարժական արժեքները (այսուհետ՝ արժեք) ներառում են պետական, ինչպես նաև պետական սեփականություն չհանդիսացող թանգարանային, արխիվային և ձեռագիր ու տպագիր հավաքածուները:

3. Շտեմարանում արժեքների վերաբերյալ տեղեկույթը ներկայացվելու է դրանց մասին ընդհանուր պատկերացում կազմելու սահմաններում: Այն կարող է ներկայացվել նաև անգլերեն և ռուսերեն տարբերակներով:

4. Շտեմարանի ստեղծման հիմնական նպատակը Հայաստանի Հանրապետության մշակութային շարժական ժառանգության, ինչպես նաև այլ պետությունների տարածքում գտնվող ազգային մշակութային արժեքների վերաբերյալ տեղեկույթը միասնական ձևաչափով մեկ համակարգում հավաքելը, համակարգելը և հանրահռչակելն է:

5. Շտեմարանի ստեղծումը ներառում է համապատասխան ծրագրերի մշակումն ու ներդրումը, անհրաժեշտ սարքաշարերի ձեռքբերումը և տեղակայումը, առանձին

կապուղու վարձակալումը, արժեքների վերաբերյալ տեղեկույթին տիրապետող ու այն տրամադրող անձանցից (այսուհետ՝ սուբյեկտ) այդ տեղեկույթի ստացումը, միասնական ձևաչափին համապատասխանեցումն ու մուտքագրումը և կայքէջում այն ներկայացնելը, ինչպես նաև անհրաժեշտ տեղեկույթը ձեռք բերելու ուղիների նշումը:

6. Շտեմարանը կազմված է կենտրոնական սպասարկող հանգույցից (սերվեր), դրա ծրագրային ապահովումից և սուբյեկտների համակարգչային տեղեկատվական ցանցերին միացնող կապուղիներից (այսուհետ՝ կապուղի):

7. Շտեմարանի կենտրոնական հանգույցն ունենալու է արժեքների վերաբերյալ ստացված տեղեկույթը միասնական ձևաչափին համապատասխանեցնող և սպասարկող ծրագրեր ու համապատասխան գործիքներ:

8. Սուբյեկտները շտեմարանին տեղեկույթը տրամադրում են Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության կողմից վարձակալված կապուղով (վերջինին միացված չլինելու դեպքում՝ էլեկտրոնային կրիչով):

9. Շտեմարանը վարում է Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարությունը: Շտեմարանը վարող անձն իրականացնում է միայն մշակութային շարժական ժառանգության հանրահռչակման անվճար ծառայություն:

10. Շտեմարանը գործելու է շուրջօրյա՝ ապահովելով պահպանվող տեղեկույթի անվտանգությունն ու սուբյեկտների հետ անխափան կապը:

11. Սուբյեկտներից վերցված տեղեկույթը շտեմարանում մշակվելուց և համակարգվելուց հետո անվտանգության նպատակով վերարտադրվում ու պահպանվում է համապատասխան կրիչների վրա, ապա ներկայացվում կայքէջում:

12. Շտեմարանի տեղեկույթն այցելուների համար պետք է դիտելի լինի համապատասխան կայքէջի միջոցով՝ սույն կարգի 23-րդ կետի պահանջների սահմաններում:

II. ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

13. Շտեմարանում ընդգրկվելու են՝

1) պետական սեփականություն հանդիսացող արժեքների վերաբերյալ տեղեկույթը.

2) համայնքային սեփականություն հանդիսացող արժեքների վերաբերյալ տեղեկույթը (կամավորության սկզբունքով).

3) կամավորության սկզբունքով՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող արժեքների վերաբերյալ տեղեկույթը.

4) այլ պետությունների տարածքում գտնվող ազգային մշակութային արժեքների վերաբերյալ տեղեկույթը:

III. ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

14. Շտեմարանում ընդգրկվող՝ պետական սեփականություն հանդիսացող արժեքների վերաբերյալ տեղեկույթը ներառում է՝

1) թանգարանների հիմնական ֆոնդերում հաշվառված հավաքածուների վերաբերյալ տեղեկույթը.

2) ձեռագիր և տպագիր հավաքածուների վերաբերյալ տեղեկույթը.

3) արխիվային հավաքածուների վերաբերյալ տեղեկույթը:

IV. ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ՝ ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ԸՆԴԳՐԿՈՒՄԸ

15. Շտեմարանում կամավորության սկզբունքով կարող է ընդգրկվել նաև պետական սեփականություն չհանդիսացող արժեքների վերաբերյալ տեղեկույթը՝ համաձայն սեփականատերերի հայտերի: Հայտի ձևը հաստատվում է Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարի հրամանով:

16. Պետական սեփականություն չհանդիսացող արժեքների վերաբերյալ տեղեկույթը շտեմարանում կարող է ընդգրկվել, եթե այն համապատասխանում է սույն կարգի 19-րդ, 20-րդ և 21-րդ կետերով սահմանված չափանիշներից որևէ մեկին:

17. Պետական սեփականություն չհանդիսացող, ինչպես նաև այլ պետությունների տարածքում գտնվող ազգային մշակութային արժեքների վերաբերյալ տեղեկույթը շտեմարանում ընդգրկելու գործընթացը կարգավորվում է համապատասխան պայմանագրերով կամ համաձայնագրերով, եթե դրանք համապատասխանում են սույն կարգի 19-րդ, 20-րդ և 21-րդ կետերով սահմանված չափանիշներից որևէ մեկին:

V. ՇՏԵՄԱՐԱՆՈՒՄ ԱՐԺԵՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ԸՆԴԳՐԿՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

18. Արժեքների վերաբերյալ տեղեկույթը շտեմարանում ընդգրկվելու է ըստ դրանց տեսակների՝ անկախ սեփականության ձևից և ստեղծման ժամանակից:

19. Շտեմարանում թանգարանների հավաքածուների վերաբերյալ տեղեկույթի ընդգրկման չափանիշներն են՝

1) Հայաստանի Հանրապետության թանգարանային ֆոնդի առարկայացուցակում (ռեեստր) հաշվառված լինելը.

2) ազգային մշակութային արժեքների՝ այլ պետությունների թանգարանների հիմնական ֆոնդերի հաշվառման մատյաններում հաշվառված լինելը:

20. Շտեմարանում ձեռագիր և տպագիր հավաքածուների վերաբերյալ տեղեկույթի ընդգրկման չափանիշներն են՝

1) ձեռագիր գիրք համարվելը.

2) գրավոր հուշարձան (հնատիպ, հնագույն և հազվագյուտ տպագիր գրականություն) համարվելը.

3) փորձաքննությամբ արժևորված փաստաթուղթ (գրականություն) համարվելը:

21. Շտեմարանում արխիվային հավաքածուների վերաբերյալ տեղեկույթի ընդգրկման չափանիշներն են՝

1) ժողովրդի կյանքի հիշարժան դեպքերը, կենցաղը, մշակույթը, հասարակության և պետության զարգացումը, գիտության և ճարտարագիտության պատմությունը ներկայացնող՝ առանձնապես արժեքավոր և հազվագյուտ փաստաթուղթ, կինո-, ֆոտո-, ֆոնո-, տեսանյութ լինելը,

2) նշանավոր մարդկանց (պետական, քաղաքական, հասարակական, մշակութային գործիչների, ազգային հերոսների) կյանքն ու գործունեությունը ներկայացնելու գործում առանձնապես արժեքավոր և հազվագյուտ փաստաթուղթ, կինո-, ֆոտո-, ֆոնո-, տեսանյութ լինելը:

VI. ՇՏԵՄԱՐԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

22. Շտեմարանին տեղեկույթը տրամադրվում է արժեքի հետևյալ բնութագրիչներով՝

1) թեմատիկ պատկանելությունը կամ դասակարգումը (թեման, ենթաթեման, տեսակը՝ ըստ շտեմարանի ծրագրի ընտրանու).

2) անվանումը (անունը, վերնագիրը, խորագիրը).

3) ստեղծողի (ստեղծողների՝ հեղինակի, վարպետի, կազմողի, գրչի, ծաղկողի, պատվիրողի և (կամ) ստացողի, կատարողի, թարգմանչի, սցենարի հեղինակի, բեմադրող ռեժիսորի, օպերատորի, նկարչի, հնչյունային օպերատորի, պրոդյուսերի, բանասացի, գրառողի և ուրիշների) անունը, ազգանունը, ծածկանունը (եթե այդպիսիք կան) կամ արտադրողի անվանումը.

4) ստեղծման և (կամ) արտադրման վայրը.

5) ստեղծման և (կամ) արտադրման ժամանակը (թվագրումը).

6) նյութը.

7) չափսը (քաշ, ծավալ, էջ, այունակ, տող, լայնություն, երկարություն (մետրաժ) և այլն՝ ըստ արժեքի առանձնահատկությունների).

8) քանակը (բաղադրիչները՝ լրակազմ, ներդիրներ, պատկերներ, ձևավորման և (կամ) զարդարման տարրեր, մասեր և այլն՝ ըստ արժեքի առանձնահատկությունների).

9) նկարագրությունը (բնութագրում, բովանդակություն, լեզու, գրային և (կամ) թվային և (կամ) պատկերային նշումներ ու նշաններ, ձևավորումը՝ նկարներ, պատկերներ, խորան-ներ, կիսախորաններ, ճակատազարդեր, զարդագրեր, լուսանցազարդեր, գույներ, գու-նային լուծումներ և այլն՝ ըստ արժեքի առանձնահատկությունների).

10) պատրաստման (ստեղծման) տեխնիկան (տեխնոլոգիա, գրատեսակ, ժապավենի տեսակ և այլն՝ ըստ արժեքի առանձնահատկությունների).

11) վիճակը.

12) պատկերը կամ լուսանկարը (տպագրման համար ոչ պիտանի խտությամբ, ձեռագրերի և ձայնագրությունների դեպքում՝ ընտրովի հատված կամ կադր, իսկ գրքերի դեպքում՝ տիտղոսաթերթ).

13) սուբյեկտի տառային պայմանանիշը (շիֆր) և հաշվառանիշը (գույքահամար), այլ պետություններում գտնվելու դեպքում՝ նաև պետությունը, պահպանողը:

VII. ՇՏԵՄԱՐԱՆԻ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ

23. Շտեմարանի կայքէջ այցելած անձանց համար դիտելի է արժեքների՝ միայն սույն կարգի 22-րդ կետի 1-7-րդ և 12-13-րդ ենթակետերով նախատեսված տեղեկույթը: Այցելուն դիտելի բնութագրիչներից յուրաքանչյուրով կարող է կատարել շտեմարանում ընդգրկված արժեքների փնտրում:

24. Բացի շտեմարանի արժեքների վերաբերյալ սույն կարգի 23-րդ կետով նախա-տեսված տեղեկույթից՝ այցելուն այլ տվյալներ կարող է ստանալ միայն դրանք պահպանող

կազմակերպություններից՝ վերջիններիս կողմից ներկայացվող պայմաններով և փոխադարձ համաձայնությամբ:

VIII. ՇՏԵՄԱՐԱՆԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ԹՎԱՅՆԱՑՈՒՄԸ

25. Պետական սեփականություն հանդիսացող արժեքների վերաբերյալ տեղեկույթը թվայնացնում են դրանք պահպանող կազմակերպությունները՝ սույն կարգի 22-րդ կետի պահանջների համաձայն:

26. Այն արժեքները, որոնց վերաբերյալ բացակայում է կամ ամբողջական չէ սույն կարգով սահմանված տեղեկույթը, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության միջոցով ենթարկվում են փորձաքննության, և արդյունքում ստացված տեղեկույթը թվայնացվում է սույն կարգի 22-րդ կետի պահանջների համաձայն:

27. Պետական սեփականություն չհամարվող օբյեկտների վերաբերյալ տեղեկույթը թվայնացվում է դրանց սեփականատիրոջ կողմից կամ նրա և շտեմարանը վարող անձի միջև կնքված պայմանագրի հիման վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ Դ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2014 թվականի
սեպտեմբերի 11-ի N 1058 - Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆԻՆ ՏԵՂԵԿՈՒՅԹ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Կազմակերպության անվանումը	Գտնվելու վայրը
Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության ենթակայության		
1.	«Հայաստանի պատմության թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, 4
2.	«Հայաստանի ազգային պատկերասրահ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Արամի 1
3.	«Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Արամի 1
4.	«Հովհաննես Շարամբեյանի անվան ժողովրդական ստեղծագործության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Աբովյան 64
5.	«Փայտարվեստի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Պարոնյան 2, 4
6.	«Ռուսական արվեստի թանգարան» (պրոֆեսոր Արամ Աբրահամյանի հավաքածու) » պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Իսահակյան 38
7.	«Երվանդ Քոչարի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Մեսրոպ Մաշտոցի 39/12
8.	«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Թաիրովի 15
9.	«Հովհաննես Թումանյանի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Մոսկովյան 40
10.	«Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Զարոբյան 20
11.	«Ալեքսանդր Սպենդիարյանի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Նալբանդյան 21
12.	«Եղիշե Չարենցի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Մեսրոպ Մաշտոցի 17
13.	«Արամ Խաչատրյանի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Զարոբյան 3
14.	«Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Սարյան 3
15.	«Սերգեյ Փարաջանովի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Ձորագյուղ, Ազգագրական թաղամաս, 15/16

16.	«Հայ և ռուս ժողովուրդների բարեկամության թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ՀՀ Կոտայքի մարզ, քաղ. Աբովյան, Բարեկամության հրապարակ, 5
17.	«Նիկողայոս Ադոնցի անվան Սիսիանի պատմության թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ՀՀ Սյունիքի մարզ, քաղ. Սիսիան, Նիկողայոս Ադոնցի նրբ., 6ա
18.	«Հրազդանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ՀՀ Կոտայքի մարզ, քաղ. Հրազդան, Սպանդարյան 2
19.	«Օրբելի եղբայրների տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ՀՀ Կոտայքի մարզ, քաղ. Ծաղկաձոր, Օրբելի եղբայրների 8
20.	«Ցուցահանդեսային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Դեմիրճյան 31
21.	«Հայաստանի ազգային գրադարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Տերյան 72
22.	«Հայաստանի ազգային գրապալատ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Գևորգ Քոչարի 21
23.	«Ստեփանավանի մշակույթի և ժամանցի կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ՀՀ Լոռու մարզ, քաղ. Ստեփանավան, Գարեգին Նժդեհի 2
Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ենթակայության		
24.	«Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Մեսրոպ Մաշտոցի 53
25.	«Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Քանաքեռ 2, տուն 4
Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի ենթակայության		
26.	«Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Ծիծեռնակաբերդի հուշահամալիր
27.	« ՀՀ ԳԱԱ ԵԳԻ Հովհաննես Կարապետյանի անվան երկրաբանության թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Բաղրամյան 24ա
28.	«Վ. Համբարձումյանի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (ՀՀ ԳԱԱ Վիկտոր Համբարձումյանի անվան Բյուրականի աստղադիտարանի կազմում)	ՀՀ Արագածոտնի մարզ, գ. Բյուրական
Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության ենթակայության		
29.	«Հայաստանի բնության պետական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Տիգրան Մեծի 34
Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ենթակայության		
30.	«ՀՀ պաշտպանության նախարարության «Մայր Հայաստան» զինվորական թանգարան» զորամաս	քաղ. Երևան, Ազատության 2
31.	«Սարդարապատի հուշահամալիր. Հայոց ազգագրության և	ՀՀ Արմավիրի մարզ,

ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	գ. Արաքս, Դանիել-բեկ Փիրումյան 1
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարության ենթակայության	
32. «Ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական շենք N 3
33. «Ալեքսանդր Թամանյանի թանգարան-ինստիտուտ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական շենք N 3
Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության ենթակայության	
34. «Հայաստանի ազգային արխիվ» պետական ոչ առևտրային կազմակերպություն	քաղ. Երևան, Հ. Քոչարի 5/2,
Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի ենթակայության	
35. «Կապանի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ՀՀ Սյունիքի մարզ, քաղ. Կապան, Մուշեղ Հարությունյան 3
Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի ենթակայության	
36. «Վայոց ձորի մարզի Եղեգնաձորի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ՀՀ Վայոց ձորի մարզ, քաղ. Եղեգնաձոր, Շահումյան 4
Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի ենթակայության	
37. «Գեղարքունիքի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ՀՀ Գեղարքունիքի մարզ, քաղ. Գավառ, Ջորավար Անդրանիկի 32
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետարանի ենթակայության	
38. «Շիրակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ՀՀ Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Մյասնիկյան 118
39. «Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ՀՀ Շիրակի մարզ, քաղ. Գյումրի, Հաղթնակի 47
Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի ենթակայության	
40. «Նորայր Սիսակյանի տուն-թանգարան» (մասնավոր սեփականություն)	ՀՀ Արագածոտնի մարզ, քաղ. Աշտարակ, Ա. Ղափանցյան 7

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ենթակայության	
41. «Պարույր Սևակի տուն-թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ՀՀ Արարատի մարզ, գ. Ջանգակատուն, Պարույր Սևակի փակուղի, 1
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ենթակայության	
42. «Լոռի-Փամբակի երկրագիտական թանգարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն	ՀՀ Լոռու մարզ, քաղ. Վանաձոր, Դեմիրճ-յան 23/1
Երևանի քաղաքապետարանի ենթակայության, ֆոնդային հավաքածուն՝ ՀՀ մշակույթի նախարարության ենթակայության	
43. «Ժամանակակից արվեստի թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (կամավորության սկզբունքով)	քաղ. Երևան, Մեսրոպ Մաշտոցի 7
44. «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» համայնքային ոչ առևտրային կազմակերպություն (կամավորության սկզբունքով)	քաղ. Երևան, Էրեբունի 38

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ ԴԱՎԻԹՅՈՒՆՅԱՆ